ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
13.01.2023թ. թիվ 2/4-Լ որոշման

Հայաստանի խորհրդի նախագահ՝

Սիմոն Բաբայան

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԸՆԴՈՒՆՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ

Կ Ա Ր Գ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)
24.07.2026թ.

ք.Երևան, 2023թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Որակավորման քննությունների կազմակերպման, ընդունման, անցկացման և հանձնման սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման քննությունների կազմակերպման, անցկացման, ընդունման և հանձնման, այդ թվում՝ հավակնորդներից փաստաթղթերի ընդունման, ուսումնասիրման, ինչպես նաև քննությունների արդյունքների բողոքարկման կարգերը:

2. Սույն կարգում կիրառված հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

1) **Օրենք՝** «Փաստաբանության մասին» օրենքը.

2) **Կարգ՝** Որակավորման քննությունների կազմակերպման, ընդունման, անցկացման և հանձնման սույն կարգը.

3) **Պալատ՝** Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը.

4) **Որակավորման քննություններ**՝ փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու համար Կարգով սահմանված միասնական քննություն, որն անցկացվում է գրավոր առաջադրանքներ լուծելու (**այսուհետ՝ գրավոր փուլ կամ առաջին փուլ**) և հարցազրույցի մասնակցելու **(այսուհետ՝ հարցազրույցի փուլ կամ երկրորդ փուլ)** միջոցով.

5) **Խորհուրդ**՝ Պալատի խորհուրդը.

6) **Հանձնաժողով**՝ Պալատի որակավորման հանձնաժողովը.

7) **ՀՀ փաստաբանական ակադեմիա**՝ «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամը.

8) **ՀՀ փաստաբանական ակադեմիայի շրջանավարտ**՝ ՀՀ փաստաբանական ակադեմիայում համապատասխան ուսուցում անցած և այն ավարտած ունկնդիրը.

9) **Աշխատակազմ՝** Պալատի աշխատակազմը, այդ թվում՝ Աշխատակազմի համապատասխան աշխատակիցը.

10) **Դիմորդ՝** որակավորման քննություններին մասնակցելու համար սահմանված դիմում ներկայացրած ֆիզիկական անձը.

11) **Հավակնորդ**՝ Կարգի 3-րդ կետի պահանջներին բավարարող դիմորդը, որին Հանձնաժողովը թույլատրել է մասնակցել որակավորման քննություններին.

12) **Ժամանակացույց**՝ Որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույց:

3. Որակավորման քննություններին մասնակցելու իրավունք ունեն ՝

1) ՀՀ փաստաբանական ակադեմիայի շրջանավարտները.

2) միաժամանակ իրավագիտության բակալավրի և իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճաններ կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան և իրավաբանի՝ առնվազն յոթ տարվա մասնագիտական ստաժ ունեցող անձը, բացառությամբ եթե նա դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ.

3) նախկինում առնվազն հինգ տարվա փաստաբանական գործունեության ստաժ, ինչպես նաև առնվազն հինգ տարվա քննիչի, դատախազի կամ դատավորի մասնագիտական ստաժ կամ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, բացառությամբ եթե նա դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ, կամ նրա՝ փաստաբանի, դատավորի կամ դատախազի գործունեություն իրականացնելու իրավունքը չի դադարեցվել նրան պատասխանատվության ենթարկելու կամ անհամատեղելիության պահանջները խախտելու հետևանքով:

4. Որակավորման քննությունները կազմակերպում և անցկացնում է ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը:

5. Որակավորման քննությունների անցկացման, ինչպես նաև Կարգի հետ կապված այլ հարցերի վերաբերյալ նամակագրությունը դիմորդների կամ հավակնորդների հետ իրականացվում է առձեռն կամ էլեկտրոնային փոստի միջոցով, դիմորդի կամ հավակնորդի՝ որակավորման քննության մասնակցության դիմումի մեջ նշված էլեկտրոնային փոստին հաղորդագրություն ուղարկելու եղանակով: Ծանուցմանը կարող է փոխարինել նաև ՀՀ փաստաբանների պալատի կայքում (www.advocates.am) հրապարակված ծանուցումը:

6. Հանձնաժողովը հաշմանդամ հավակնորդին ապահովում է հատուկ հարմարություն, եթե հավակնորդն այդ մասին նշել է որակավորման քննության մասնակցության դիմումի մեջ և այդպիսի միջոցի ապահովումը չի խաթարում որակավորման քննության բնականոն ընթացքն ու ակադեմիական արդարության սկզբունքը: Հատուկ հարմարությունների տրամադրումը չի կարող մերժվել՝ պայմանավորելով նման հարմարության բացակայությամբ

7. Որակավորման քննությունները Կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված անձանց և Կարգի 3-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված անձանց համար կազմակերպվում է առանձնացված՝ հաշվի առնելով Շրջանավարտների քանակը, ինչպես նաև ՀՀ փաստաբանական ակադեմիայում ընդունելության քննություններին մասնակցելու և ուսումնառության ընթացքում փաստաթղթերի ստուգված լինելու հանգամանքը:

II. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

8. Հանձնաժողովը՝

1) սահմանում է որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցերը.

2) սահմանում է որակավորման քննությունների մասնակցության դիմումի, ինքնակենսագրական տվյալներ պարունակող թերթիկի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի (այդ թվում՝ Հանձնաժողովի անդամների և դիտորդների վկայականների) ձևերը (ձևանմուշները).

3) Աշխատակազմի միջոցով կազմակերպում է որակավորման քննությունների մասնակցության դիմումների և փաստաթղթերի ընդունումը.

4) ներկայացված փաստաթղթերի և տեղեկությունների արժանահավատությունը պարզելու նպատակով կարող է հարցումներ կատարել պետական և ոչ պետական մարմիններին, ֆիզիկական և իրավաբանական անձանց.

5) ուսումնասիրում է որակավորման քննություններին մասնակցելու համար ներկայացված դիմումները և կից փաստաթղթերը՝ որոշում ընդունելով որակավորման քննություններին մասնակցելը թույլատրելու կամ մերժելու մասին.

6) հսկում և վերահսկում է որակավորման քննությունների ընթացքը.

7) անցկացնում է որակավորման քննությունները՝ գրավոր և բանավոր փուլերը.

8) ամփոփում է որակավորման քննությունների գրավոր փուլի և բանավոր փուլի արդյունքները.

9) որակավորման քննությունների գրավոր և բանավոր փուլերի արդյունքների հիման վրա ընդունում է ամփոփիչ որոշում՝ հաստատելով գրավոր և բանավոր փուլերը հաղթահարած և վկայագրեր ստանալու իրավունք ստացած հավակնորդների ցանկը.

10) սահմանում է որակավորման քննությունների գնահատման չափանիշները.

11) որակավորման քննությունների կազմակերպմանը և անցկացմանը վերաբերող իր լիազորությունների շրջանակներում ընդունում է որոշումներ, այդ թվում՝ սահմանում է հաշմանդամություն կամ այլ հատուկ (օժանդակ) կարիքներ ունեցող անձանց որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման առանձնահատկությունները՝ պահպանելով ընդհանուր պահանջները (ժամկետ, գնահատում և այլն).

(կետը փոփոխվել է 24.07.2026թ. թիվ 14/37 որոշմամբ)

12) Հանձնաժողովի որոշումներում կատարում է փոփոխություններ և/կամ լրացումներ, իսկ վրիպակների առկայության դեպքում ուղղում է վրիպակները.

(կետը փոփոխվել է 24.07.2026թ. թիվ 14/37 որոշմամբ)

13) իրականացնում է Օրենքի, Պալատի կանոնադրության և սույն կարգին համապատասխան այլ գործողություններ:

9. Հանձնաժողովի նախագահը՝

1) կազմակերպում է Հանձնաժողովի աշխատանքները.

2) հրավիրում և վարում է Հանձնաժողովի նիստերը.

3) ստորագրում է Հանձնաժողովի որոշումները.

4) հաստատում է որակավորման քննությունների համար անհրաժեշտ խնդիրները, հարցատոմսերը և այլ անհրաժեշտ նյութերը, ինչպես նաև Պալատի

միջոցով և հաշվին կազմակերպում է նշված նյութերի կազմումը՝ պայմանագրային հիմունքներով.

5) ապահովում է որակավորման քննությունների ժամանակ օգտագործվող խնդիրների, հարցատոմսերի և այլ առաջադրանքների գաղտնիությունը.

6) իրականացնում է Օրենքի, Պալատի կանոնադրության և սույն կարգին համապատասխան այլ գործողություններ:

10. Հանձնաժողովի քարտուղարը կազմակերպում է Հանձնաժողովի նիստի արձանագրության վարումը, որոշումների հաշվառումը և իրականացնում է Պալատի կանոնադրության և սույն կարգին համապատասխան այլ գործողություններ:

11. Հանձնաժողովի նիստն իրավասու է (քվորում ունի), եթե դրան մասնակցում է Հանձնաժողովի առնվազն 5 (հինգ) անդամ: Որակավորման քննությունների անցկացման Հանձնաժողովի գործողությունները նիստ չեն համարվում:

III. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ԴԻՏՈՐԴՆԵՐԸ

12. Դիտորդները ներգրավվում են Հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ կամ դիտորդական կազմակերպությունների դիմումների հիման վրա:

13. Հանձնաժողովի նախագահը կարող է որպես դիտորդներ ներգրավել ՀՀ փաստաբանական ակադեմիայի ունկնդիրներին, ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից առաջարկված անձանց, ինչպես նաև իրավապաշտպան գործունեություն իրականացնող ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների կողմից առաջարկված անձանց:

14. Դիտորդական կազմակերպությունների դիմումները քննարկում է Հանձնաժողովը: Դիմումը բավարարելու դեպքում Հանձնաժողովի նախագահը տրամադրում է դիտորդի վկայական:

15. Կարգի իմաստով դիտորդական կազմակերպություններ են համարվում՝

1) միջազգային կազմակերպությունները.

2) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական կամ հյուպատոսական կազմակերպությունները.

3) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա հասարակական կամ այլ ոչ առևտրային կազմակերպությունները, որոնց կանոնադրական խնդիրները ներառում են մարդու իրավունքների պաշտպանության հարցեր:

16. Որակավորման քննությունների վերաբերյալ հայտարարությունից հետո 10 (տասը) օրվա ընթացքում դիտորդական կազմակերպությունը Հանձնաժողովին է ներկայացնում դիմում, որը պետք է պարունակի՝

1) դիմողի անվանումը,

2) ծանուցման հասցեն,

3) հեռախոսահամարը,

4) էլեկտրոնային փոստի հասցեն,

5) Կարգի պայմաններն ընդունելու վերաբերյալ նշում,

6) մեկ դիտորդի թեկնածուի անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը,

7) դիմումի տրման օրը, ամիսը, տարեթիվը,

8) դիմողի ստորագրությունը:

17. Դիմումին կցվում է կանոնադրության պատճենը, տեղեկանք դիտորդ առաջարկվող անձի՝ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու մասին, ինչպես նաև դիտորդի թեկնածուի կողմից ստորագրված հայտարարություն այն մասին, որ համաձայնվել է Կարգի պայմաններին:

18. Կարգի 15-րդ կետում նշված կազմակերպությունների դիտորդների ընդհանուր քանակը չի կարող գերազանցել 5-ը (հինգ), ընդ որում՝ եթե դիմել են հինգից ավելի կազմակերպություններ, ապա նրանցից ընտրվում է առաջին հինգ դիմած կազմակերպությունների դիտորդները:

19. Հանձնաժողովը մերժում է դիտորդների մասին դիմումը, եթե՝

1) Կարգով նախատեսված կազմակերպության կանոնադրական խնդիրները կամ նրանց գործունեությունը չեն բավարարում Կարգի պահանջներին, կամ

2) դիմող անձը չի համաձայնվել պահպանել Կարգի պահանջները, կամ

3) պահպանված չեն դիմումի՝ Կարգով սահմանված պահանջները, ինչպես նաև չեն ներկայացվել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, կամ

4) դիտորդ առաջարկած կազմակերպության կամ դիտորդի թեկնածուի հասարակական գործունեության վերաբերյալ զանգվածային լրատվական միջոցներում առկա է բացասական տեղեկատվություն:

20. Դիտորդին թույլատրվում է վկայականի հիման վրա դիտորդական առաքելություն իրականացնել անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում:

21. Դիտորդ է համարվում՝

1) դիտորդական կազմակերպության ղեկավարի կողմից առաջադրված չափահաս ֆիզիկական անձը՝ Հանձնաժողովի որոշման կայացման պահից.

2) Հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ ներգրավված չափահաս ֆիզիկական անձը, Հանձնաժողովի նախագահի կողմից դիտորդի վկայական տրամադրելու պահից:

22. Դիտորդն իրավունք ունի՝

1) գրավոր քննության ժամանակ ներկա գտնվել դիմորդների գրանցմանը և քննական սենյակում.

2) հարցազրույցի ժամանակ՝ հավակնորդների պատրաստման սենյակում, ինչպես նաև խնդիրները կամ հարցատոմսերը պատահականության սկզբունքով ընտրելու ժամանակ, ներկա գտնվել.

3) ծանոթանալ Հանձնաժողովի որոշումներին, արձանագրություններին՝ պահպանելով Կարգի պահանջները.

4) Հանձնաժողովի նախագահին կամ քարտուղարին բանավոր կամ գրավոր ներկայացնել իր դիտողությունները, առաջարկությունները՝ քննությունների հետ կապված ցանկացած հարցի վերաբերյալ.

(կետը լրացվել է 24.07.2026թ. թիվ 14/37 որոշմամբ)

5) կատարել Կարգով նախատեսված այլ գործողություններ:

23. Դիտորդը պարտավոր է՝

1) չխոչընդոտել Հանձնաժողովի գործունեությանը.

2) գրավոր քննության ժամանակ լսարանում, ինչպես նաև հարցազրույցին պատրաստվելու համար նախատեսված սենյակում չշփվել հավակնորդների հետ.

(կետը փոփոխվել է 24.07.2026թ. թիվ 14/37 որոշմամբ)

3) չխանգարել քննության բնականոն ընթացքը.

4) քննական սենյակում չիրականացնել տեսանկարահանում կամ ձայնագրառում.

5) իր իրավունքներն իրականացնել բարեխղճորեն:

24. Հանձնաժողովը, ստանալով դիտորդի կողմից բանավոր կամ գրավոր բողոքը (պահանջը), պարտավոր է ողջամիտ ժամկետում արձագանքել:

25. Հանձնաժողովն իրավունք ունի դիտորդին զրկել դիտորդի կարգավիճակից՝

1) դիտորդի կողմից որևէ հավակնորդի աջակցելու կամ հավակնորդի հետ առանց Հանձնաժողովի նախագահի կամ անդամի թույլտվության հաղորդակցվելու դեպքում.

2) քննության իրականացմանը խոչընդոտելու դեպքում.

3) Կարգի պահանջները խախտելու դեպքում:

26. Դիտորդը չի վարձատրվում իր առաքելությունն իրականացնելու համար:

27. Սույն կարգի 25-րդ կետում նշված դեպքն արձանագրելու դեպքում Հանձնաժողովի նախագահը արգելում է դիտորդին մասնակցել որակավորման քննություններին, եթե դիտորդը շարունակում է խոչընդոտել քննությունների ընթացքը:

28. Հարցազրույցի ժամանակ քննասենյակում դիտորդը կարող է ներկա գտնվել միայն քննություն հանձնող հավակնորդի համաձայնությամբ:

IV. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

29. Որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման մասին հայտարարության և ժամանակացույցի հրապարակման մեջ նշված ժամկետում դիմորդները ներկայացնում են սույն կարգով սահմանված փաստաթղթերը:

30. Սույն կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված անձինք (Շրջանավարտները) Հանձնաժողովին են ներկայացնում՝

1) սահմանված ձևի դիմում,

2) մեկ գունավոր լուսանկար՝ 3x4 չափի,
3) անձը հաստատող վավեր փաստաթղթի պատճեն,
4) բարձրագույն իրավաբանական կրթության մասին փաստաթղթի պատճեն,
5) ՀՀ փաստաբանական ակադեմիայի կողմից տրամադրված հավաստագրի պատճեն,
6) համաձայնություն՝ ՀՀ փաստաբանական ակադեմիայից անձնական գործի պատճենները ստանալու վերաբերյալ:

31. Սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված անձինք Հանձնաժողովին են ներկայացնում՝
1) սահմանված ձևի դիմում,
2) մեկ գունավոր լուսանկար՝ 3x4 չափի,
3) անձը հաստատող վավեր փաստաթղթի պատճեն,
4) սահմանված ձևի ինքնակենսագրական տվյալների թերթիկ,
5) բարձրագույն իրավաբանական կրթության մասին փաստաթղթի պատճեն,
6) համաձայնություն՝ պետական մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, իրավաբանական և ֆիզիկական անձանցից՝ դիմորդի վերաբերյալ կրթության, դատվածության և աշխատանքային ստաժի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից տեղեկություններ ստանալու մասին,
7) քննության մասնակցության վճարի անդորրագիրը (փոխանցման փաստաթուղթը),
8) առնվազն յոթ տարվա մասնագիտական ստաժը հաստատող ապացույց.
9) դատվածություն չունենալու վերաբերյալ իրավասու պետական մարմնի կողմից տրված փաստաթուղթ:

32. Սույն կարգի 3-րդ կետի 3-րդ ենթակետում նշված անձինք Հանձնաժողովին են ներկայացնում՝
1) սահմանված ձևի դիմում,
2) մեկ գունավոր լուսանկար՝ 3x4 չափի,
3) անձը հաստատող վավեր փաստաթղթի պատճեն,
4) սահմանված ձևի ինքնակենսագրական տվյալների թերթիկ,
5) բարձրագույն իրավաբանական կրթության մասին փաստաթղթի պատճեն,
6) համաձայնություն՝ պետական մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, իրավաբանական և ֆիզիկական անձանցից՝ դիմորդի վերաբերյալ կրթության, գիտական աստիճանի, դատվածության և աշխատանքային (մասնագիտական) ստաժի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից տեղեկություններ ստանալու մասին,
7) քննության մասնակցության վճարի անդորրագիրը (փոխանցման փաստաթուղթը),

8) առնվազն հինգ տարվա փաստաբանական գործունեության ստաժը, ինչպես նաև առնվազն հինգ տարվա քննիչի, դատախազի կամ դատավորի մասնագիտական ստաժը կամ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճանը հաստատող ապացույց.

9) դատվածություն չունենալու վերաբերյալ իրավասու պետական մարմնի կողմից տրված փաստաթուղթ:

33. Քննությունների մասնակցության վճարը սահմանվում է 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որը վճարվում է ՀՀ փաստաբանների պալատի՝ Արարատբանկում սպասարկվող թիվ 1510002794720100 հաշվարկային հաշվին:

34. Սույն կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված անձանց կողմից ներկայացված փաստաթղթերի և տվյալների հավաստիության ստուգումը Հանձնաժողովը կազմակերպում է փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետի հաջորդ օրվանից հաշված 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:

35. Սույն կարգի 3-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված անձանց կողմից ներկայացված փաստաթղթերի և տվյալների հավաստիության ստուգումը Հանձնաժողովը կազմակերպում է փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետի հաջորդ օրվանից հաշված երկու ամսվա ընթացքում:

36. Հանձնաժողովին ներկայացվող փաստաթղթերը պետք է համապատասխանեն նաև հետևյալ պահանջներին.

1) որակավորման քննությունների մասնակցության դիմումը պետք է լրացվի հայերեն լեզվով և ստորագրվի դիմորդի կողմից.

2) ինքնակենսագրական տվյալների թերթիկը պետք է լրացվի հայերեն լեզվով և ստորագրվի դիմորդի կողմից.

3) օտար լեզվով ներկայացվող փաստաթղթի դեպքում պետք է նաև ներկայացնել հայերեն լեզվով պատշաճ թարգմանությունը՝ նոտարական վավերացմամբ.

4) եթե դիմորդի բարձրագույն իրավաբանական կրթություն ստանալը հավաստվում է օտարերկրյա պետությունում տրված ավարտական փաստաթղթով, ապա նշված փաստաթղթի հետ դիմորդը Հանձնաժողովին պետք է ներկայացնի նաև ստացած կրթության ճանաչումն ու համարժեքությունը հավաստող իրավասու մարմնի կողմից տրված հայերեն լեզվով փաստաթուղթը.

5) եթե դիմորդի գիտական աստիճանը հավաստվում է օտարերկրյա պետությունում տրված փաստաթղթով, ապա նշված փաստաթղթի հետ դիմորդը պետք է ներկայացնի նաև Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից տրված հավաստագիրը (համապատասխանեցման փաստաթուղթը).

6) դատվածության բացակայության մասին տեղեկանքը պետք է տրված լինի ոչ շուտ, քան տվյալ որակավորման քննությունների փաստաթղթերի ընդունման ժամկետի սկիզբը.

7) չի թույլատրվում ներկայացնել հատուկ համազգեստով լուսանկար (օրինակ՝ զինվորական, ոստիկանական և այլն).

8) ՀՀ փաստաբանական ակադեմիայի կողմից տրված հավաստագիրը պետք է ներկայացվի նշված հավաստագրի գործողության ժամկետում.

9) փաստաբանական գործունեության ստաժը պետք է հաստատվի ՀՀ փաստաբանների պալատի կողմից տրված տեղեկանքով (քաղաքացու դիմումի հիման վրա Աշխատակազմը պարտավոր է հինգ օրվա ընթացքում տրամադրել սույն ենթակետում նշված տեղեկանքը).

10) դատավորի գործունեության ստաժը պետք է հաստատվի ՀՀ դատական բարձրագույն խորհրդի (դատական դեպարտամենտի) կամ ՀՀ սահմանադրական դատարանի (աշխատակազմի) կողմից տրված տեղեկանքով.

11) դատախազի գործունեության ստաժը պետք է հաստատվի ՀՀ դատախազության կողմից տրված տեղեկանքով.

12) քննիչի գործունեության ստաժը պետք է հաստատվի ՀՀ քննչական համապատասխան մարմնի (իրավահաջորդ մարմնի) կողմից տրված տեղեկանքով.

13) իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճանը պետք է հաստատվի բարձրագույն որակավորման կոմիտեի (նույն պետական մարմնի իրավանախորդի) կողմից տրված վկայագրով:

37. Որակավորման քննությունների մասնակցության դիմումում սխալ տեղեկություններ նշելու, պահանջվող տեղեկությունները չնշելու կամ կեղծ (իրականությանը չհամապատասխանող) փաստաթղթեր ներկայացնելու դեպքում դիմորդին չի թույլատրվում մասնակցել որակավորման քննություններին, իսկ այդպիսի փաստերը քննություններից հետո ի հայտ գալու դեպքում հավակնորդը Հանձնաժողովի որոշմամբ կարող է համարվել որակավորման քննությունները չհանձնած՝ անկախ ստացած արդյունքից:

38. Սահմանված բոլոր փաստաթղթերը հանձնվում են առձեռն, էլեկտրոնային կամ փոստային եղանակով: Առձեռն եղանակով փաստաթղթերի ներկայացման դեպքում, փաստաթղթերի պատճենների հետ ներկայացվում են նաև դրանց բնօրինակները: Փաստաթղթերի բնօրինակները (բացառությամբ տեղեկանքների) պատճենների հետ համադրելուց հետո նույն պահին վերադարձվում են: Փաստաթղթերի էլեկտրոնային կամ փոստային տարբերակով հանձնված լինելու դեպքում դիմորդը պարտավոր է հինգ օրվա ընթացքում ներկայացնել նաև փաստաթղթերի բնօրինակները համեմատության համար: Սույն կետում նշված դեպքում բնօրինակը չներկայացնելու դիմորդի անգործությունը Հանձնաժողովը գնահատելու է, որպես նշված փաստաթղթի բացակայություն:

39. Արտակարգ դեպքերում՝ արտակարգ դրության, ռազմական դրության, համաճարակի (անմիջական սպառնալիքի կամ դրա կանխման) կամ արտակարգ բնույթ կրող այլ անկանխելի պատճառով անձանց տեղաշարժի կամ անմիջական շփումների սահմանափակումների դեպքում, Հանձնաժողովի որոշմամբ փաստաթղթերի հանձնման եղանակներից կարող է բացառվել առձեռն հանձնման եղանակը և սահմանվել ավելի պարզեցված ընթացակարգ:

40. Որակավորման քննությունների մասնակցության դիմումը, ի թիվս այլ կարգավորման, պետք է պարունակի դիմորդի համակարգչից օգտվելու (առնվազն՝ MS Word, Excel, PowerPoint) գիտելիքների և անհրաժեշտ տեխնիկական պայմաններն ապահովելու վերաբերյալ հավաստում, ինչպես նաև մասնագիտական ուղղվածությունը՝ քրեական կամ քաղաքացիական (վարչական):

41. Դիմորդը չի կարող փոփոխել մասնագիտական ուղղվածությունը:

42. Ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովը որոշում է ընդունում դիմորդի որակավորման քննությունների մասնակցության դիմումը մերժելու (քննությանը չթույլատրելու) վերաբերյալ, եթե՝

1) Կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված դիմորդը չի ներկայացրել կամ թերի է ներկայացրել Կարգի 30-րդ կետում նշված փաստաթղթերից որևիցե մեկը.

2) Կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դիմորդը չի ներկայացրել կամ թերի է ներկայացրել Կարգի 31-րդ կետում նշված փաստաթղթերից որևիցե մեկը.

3) Կարգի 3-րդ կետի 3-րդ ենթակետում նշված դիմորդը չի ներկայացրել կամ թերի է ներկայացրել Կարգի 32-րդ կետում նշված փաստաթղթերից որևիցե մեկը.

4) դիմումը կամ կից որևէ փաստաթուղթ չի համապատասխանում Կարգի 36-րդ կետի պահանջին.

5) ներկայացված փաստաթղթում նշված տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը.

6) դիմորդը չի համապատասխանում Կարգի պահանջին.

7) Կարգով սահմանված դեպքում կամ Հանձնաժողովի նախագահի կամ քարտուղարի պահանջում նշված ժամկետում դիմորդը չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթուղթը կամ պարզաբանումը.

8) դիմորդը Կարգում նշված դիմումը և փաստաթղթերը ներկայացրել է հայտարարված ժամկետից հետո:

9) դիմորդը հաջողությամբ հանձնել է որակավորման քննությունները և ստացել է որակավորման հանձնաժողովի կողմից համապատասխան վկայագիր կամ դիմորդը ունի փաստաբանի արտոնագիր կամ դիմորդը որակավորման քննությունների արդյունքները բողոքարկել է խորհրդին կամ դատական կարգով և դեռևս առկա չէ այդ բողոքի կամ հայցի (բողոքի) վերաբերյալ վերջնական որոշում կամ վճիռ (օրինական ուժի մեջ մտած):

(կետը լրացվել է 14.10.2025թ. թիվ 22/7 որոշմամբ)

43. Կարգի 42-րդ կետում նշված դիմումը մերժելու հիմքի հայտնաբերման դեպքում, Հանձնաժողովի նախագահը կամ քարտուղարը կարող է պարզաբանումներ կամ փաստաթղթեր պահանջել դիմորդից:

44. Դիմորդի որակավորման քննությունների մասնակցության դիմումը մերժելու դեպքում քննության մասնակցության վճարը (այսուհետ նաև՝ Վճար), դրա վճարած լինելու պարագայում, վերադարձման ենթակա չէ:

45. Դիմորդի որակավորման քննությունների մասնակցության դիմումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում Հանձնաժողովը որոշում է ընդունում որակավորման քննություններին դիմորդին թույլատրելու մասին:

46. Դիմորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվել որակավորման քննությունների մասնակցությունից: Սույն կետում նշված հրաժարվելու մասին դիմումը ստանալու հաջորդ օրվանից անձը համարվում է դիմորդի կարգավիճակից զրկված: Սույն կետում նշված դեպքում, Հանձնաժողովի նախագահը որոշում է կայացնում Վճարը վերադարձնելու մասին, եթե դիմորդը հրաժարվելու մասին դիմումը ներկայացրել է Հանձնաժողովին՝ որակավորման քննությունների մասնակցության դիմումը հանձնելու օրվանից տասնօրյա ժամկետում: Մնացած դեպքերում, Վճարը վերադարձման ենթակա չէ:

47. Դիմորդի որակավորման քննությունների մասնակցության դիմումը մերժելու մասին Հանձնաժողովի որոշումը կարող է բողոքարկվել Խորհրդին՝ որոշման մասին իրազեկելու օրվանից ոչ ուշ, քան 3 (երեք) օրվա ընթացքում կամ դատարան՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամկետում և կարգով:

48. Բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, Խորհրդի նախագահի անունով՝ նշելով՝

1) բողոք ներկայացնող անձի անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը,

2) վիճարկվող որոշման օրը, ամիսը, տարեթիվը և համառոտ բովանդակությունը,

3) բողոքի հիմնավորումները,

4) բողոքին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը և թերթերի քանակը (դրանց առկայության դեպքում):

49. Գրավոր բողոքի բովանդակությանն առաջադրվող պահանջը չպահպանելու դեպքում Խորհրդի նախագահն առանց նիստ գումարելու կարող է իր որոշմամբ բողոքը վերադարձնել՝ նշելով, թե Կարգի որ պահանջը չի պահպանել: Դիմորդը կարող է Խորհրդի նախագահի որոշումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, շտկել թերությունները և կրկին դիմել Խորհրդին:

50. Կարգի 48-րդ կետի պահանջներին բավարարող բողոք ստանալու դեպքում Խորհրդի նախագահը Խորհրդի անդամներից կամ այլ մասնագետներից կարող է նշանակել զեկուցող:

51. Զեկուցող նշանակվելու դեպքում Խորհրդի նախագահը զեկուցողին տրամադրում է բողոքը և դրան կից ներկայացված փաստաթղթերը:

52. Խորհուրդը բողոքը քննում և դրա վերաբերյալ որոշում է ընդունում բողոքի ստացման պահից երկշաբաթյա ժամկետում, իսկ բացառիկ դեպքերում այդ ժամկետը կարող է երկարացվել:

53. Բողոքը քննվում է գրավոր ընթացակարգով առանց նիստ հրավիրելու: Խորհուրդն իրավասու է բողոքը քննել նաև բողոք բերող անձին հրավիրելու միջոցով:

54. Քննելով բողոքը՝ Խորհուրդը կայացնում է որոշում՝

1) ներկայացրած բողոքը մերժելու և Հանձնաժողովի որոշումն անփոփոխ թողնելու մասին, կամ

2) ներկայացրած բողոքը բավարարելու և Հանձնաժողովի որոշումն անվավեր (ամբողջությամբ կամ մասնակի) ճանաչելու մասին:

55. Խորհրդի որոշման կայացման ժամանակ քննարկումներին մասնակցում են միայն Խորհրդի անդամները և Հանձնաժողովի ներկայացուցիչը:

56. Խորհրդի որոշումը բողոք բերած անձին տրամադրվում է ողջամիտ ժամկետում:

57. Եթե Խորհուրդը բավարարում է բողոքը և վերացնում է Հանձնաժողովի՝ որակավորման քննությունների մասնակցության դիմումը մերժելու մասին որոշումը, ապա Խորհրդի որոշումը հիմք է հերթական հաջորդ որակավորման քննություններին դիմորդին թույլատրելու համար:

(կետը լրացվել է 24.07.2026թ. թիվ 14/37 որոշմամբ)

V. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԸ

58. Հավակնորդը որակավորման քննությունները հանձնում է այն ուղղվածությամբ (քրեաիրավական կամ քաղաքացիաիրավական), որը նշել է որակավորման քննությունների մասնակցության դիմումում, իսկ ՀՀ փաստաբանական ակադեմիայի շրջանավարտները՝ ՀՀ փաստաբանական ակադեմիայում ուսուցանված ուղղվածությամբ:

59. Որակավորման քննությունների առաջին փուլը կազմված է երկու բաղադրիչից, իսկ հարցազրույցի փուլը՝ երկու բաղադրիչից:

60. Որակավորման քննությունների **առաջին փուլը**՝ գրավոր առաջադրանքը, պարունակում է՝

1) **առաջին բաղադրիչով**՝ իրավական խնդիրներ՝ առաջադրված փաստական հանգամանքների նկատմամբ իրավունքի նորմերը վերլուծելու և կիրառելու պահանջով, կամ թեստային առաջադրանքներ՝ հակիրճ իրավական հիպոթետիկ խնդիրներ, որոնց ճիշտ լուծումները պետք է ընտրի մասնակիցը, ինչպես նաև

2) **երկրորդ բաղադրիչով՝** դատավարական փաստաթղթերի կազմման պահանջներ, ընդ որում՝ քրեաիրավական ուղղվածության հավակնորդը կազմում է վարույթային ակտի դեմ բողոք և/կամ դատավճռի դեմ վերաքննիչ բողոք, իսկ քաղաքացիաիրավական ուղղվածության հավակնորդը՝ հայցադիմում կամ վճռի դեմ վերաքննիչ բողոք քաղաքացիական կամ վարչական գործով:

(կետը լրացվել է 24.07.2026թ. թիվ 14/37 որոշմամբ)

61. Որակավորման քննությունների առաջին փուլի գնահատումն իրականացվում է հետևյալ կերպ.

1) **առաջին բաղադրիչի գնահատումն** իրականացվում է 100 (հարյուր) միավորանոց համակարգով. հավակնորդն առաջին բաղադրիչը հաղթահարած

է համարվում, եթե գնահատվել է առնվազն 60 (վաթսուն) միավոր.

2) **երկրորդ բաղադրիչի գնահատումն** իրականացվում է 100 (հարյուր) միավորանոց համակարգով. հավակնորդը երկրորդ բաղադրիչը հաղթահարած է համարվում, եթե գնահատվել է առնվազն 60 (վաթսուն) միավոր:

62. Հավակնորդը որակավորման քննությունների առաջին փուլը հանձնած (հաղթահարած) է համարվում, եթե հաղթահարել է առաջին և երկրորդ բաղադրիչները և երկու բաղադրիչներից միասին ստացել է առնվազն **120 (հարյուր քսան)** միավոր:

63. Որակավորման քննությունների **երկրորդ** (հարցազրույցի) փուլում՝

1) **առաջին բաղադրիչով՝** ստուգվում են փաստաբանական գործունեություն իրականացնելու համար անձի անհրաժեշտ հմտություններն ու որակները, ներառյալ՝ մասնագիտական աշխատանքի փորձառությունը, էլեկտրոնային ռեսուրսներից օգտվելու հմտությունը, անձնական հատկանիշները, փաստաբանի կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածությունը.

2) **երկրորդ բաղադրիչով՝** առաջադրվում է փաստաբանի վարքագծի կանոնների վերաբերյալ հիպոթետիկ խնդիր, որի վերաբերյալ հավակնորդը բանավոր ներկայացնում է իր վերլուծությունները և դիրքորոշումը:

64. Որակավորման քննությունների երկրորդ փուլի գնահատումն իրականացվում է հետևյալ կերպ.

3) **առաջին բաղադրիչի գնահատումն** իրականացվում է 100 (հարյուր) միավորանոց համակարգով. հավակնորդն առաջին բաղադրիչը հաղթահարած է համարվում, եթե գնահատվել է առնվազն 60 (վաթսուն) միավոր.

4) **երկրորդ բաղադրիչի գնահատումն** իրականացվում է 100 (հարյուր) միավորանոց համակարգով. հավակնորդը երկրորդ բաղադրիչը հաղթահարած է համարվում, եթե գնահատվել է առնվազն 60 (վաթսուն) միավոր:

65. Հավակնորդը որակավորման քննությունների երկրորդ փուլը հանձնած (հաղթահարած) է համարվում, եթե հաղթահարել է առաջին և երկրորդ բաղադրիչները և երկու բաղադրիչներից միասին ստացել է առնվազն **120 (հարյուր քսան)** միավոր:

66. Հավակնորդը որակավորման առաջին և երկրորդ փուլերի քննությունները հանձնում է տարբեր օրերի:

67. Որակավորման քննությունների **առաջին** փուլի համար գրավոր առաջադրանքները հավակնորդները կարող են կատարել **8 (ութ)** ժամվա ընթացքում, եթե առաջին փուլի առաջին և երկրորդ բաղադրիչներով քննությունները պետք է անցկացվեն նույն օրվա ընթացքում: Սույն կետում նշված դեպքում, Հանձնաժողովը մեկ անգամ հավակնորդներին ապահովում է սնունդով: Այն դեպքում, երբ Հանձնաժողովի որոշմամբ առաջին փուլի առաջին և երկրորդ բաղադրիչներով քննությունները պետք է անցկացվեն տարբեր օրերի, ապա ժամային բաշխումը կատարվում է Հանձնաժողովի կողմից:

68. Որակավորման քննությունների **երկրորդ** փուլում հարցազրույցին պատրաստվելու համար հավակնորդներին տրվում է **1 (մեկ)** ժամ, եթե երկրորդ փուլի առաջին և երկրորդ բաղադրիչներով քննությունները պետք է անցկացվեն

նույն օրվա ընթացքում: Այն դեպքում, երբ Հանձնաժողովի որոշմամբ երկրորդ փուլի առաջին և երկրորդ բաղադրիչներով քննությունները պետք է անցկացվեն տարբեր օրերի, ապա ժամային բաշխումը կատարվում է Հանձնաժողովի կողմից:

69. Որակավորման քննությունների առաջին փուլը չհաղթահարած հավակնորդը չի կարող մասնակցել երկրորդ փուլի քննություններին:

70. Հավակնորդը պարտավոր է իր առաջադրանքը կատարել ղեկավարվելով Հանձնաժողովի կողմից տրամադրված իրավական ակտերով:

71. Որակավորման քննությունների համար անհրաժեշտ խնդիրները (առաջադրանքները) կազմելիս ելակետային տվյալները կարող են վերցվել պրակտիկայից (անհատականացվող տվյալները փոխելով) կամ լինել մտացածին:

(կետը լրացվել է 24.07.2026թ. թիվ 14/37 որոշմամբ)

72. Քննությունների ընթացքը կարող է տեսանկարահանվել կամ տեսաձայնագրվել: Տեսաձայնագրության նյութը չի կարող տրամադրվել հավակնորդին, սակայն բողոքարկման ժամանակ Խորհուրդը կարող է հետազոտել այդ տեսաձայնագրությունը՝ բողոքարկող հավակնորդի մասով:

73. Քննությունների ժամանակ հավակնորդին տրամադրվում է քննության համար անհրաժեշտ պարագաներ, ինչպես նաև խմելու ջուր:

74. Որակավորման քննությունների ժամանակ հավակնորդին չի թույլատրվում՝

1) քննասենյակ տանել (մտցնել) որևէ նյութ, թուղթ, գրիչ, պայուսակ, ուտելիք, հեռահաղորդակցման և համակարգչային սարքեր, այդ թվում՝ բջջային հեռախոս, ձայնագրիչներ կամ այլ պարագաներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Հանձնաժողովը հաշմանդամության կամ առողջական վիճակի հետ կապված խնդիրներ ունեցող դիմորդին հատուկ կարիքների համար թույլատրել է ուտելիք կամ այլ պարագաներ տանել (մտցնել) քննասենյակ.

2) օգտագործել շտեմարան, հարցաշար, իրավական ակտեր, օրենքների մեկնաբանության գրքեր, դասագրքեր, նախապես կազմված գրառումներ կամ այլ նյութեր, այդ թվում՝ նման տեղեկություններ պարունակող կամ տրամադրող աուդիո և այլ տեխնիկական միջոցներ ու սարքավորումներ, բացառությամբ Հանձնաժողովի կողմից տրամադրված իրավական ակտերից.

3) օգտվել ինտերնետային կայքերից (ինտերնետ հասանելիությունը սահմանափակվելու է) կամ տեխնիկական միջոցներից, բացառությամբ Հանձնաժողովի տրամադրած տեխնիկական միջոցների.

4) առաջին փուլի քննության ընթացքում քննասենյակում, հարցազրույցի համար պատրաստվելու սենյակում խոսել, ժեստերով կամ որևէ կերպ հաղորդակցվել.

5) քննության սենյակում, հարցազրույցի համար պատրաստվելու սենյակում, դրա հարակից տարածքներում ծխել.

6) առանց թույլտվության լքել քննասենյակը կամ հարցազրույցի սենյակը.

7) լքել քննական սրահի հարկը.

8) այլ կերպ խոչընդոտել քննության բնականոն ընթացքը.

9) քննությանը ներկայանալ ծառայողական համազգեստով.

(կետը լրացվել է 24.07.2026թ. թիվ 14/37 որոշմամբ)

10) քննությանը ներկայանալ ոչ պատշաճ հագուստով (այդ թվում՝ տղամարդկանց դեպքում՝ արհեստական կամ բնական պատառոտվածությամբ, ակնհայտ մաշվածության էֆեկտով ջինսե հագուստով կամ տաբատներով, մարզահագուստով կամ շորտերով (կարճատաբատներով), իսկ կանանց դեպքում՝ հավակնոտ և բացվածքներով հագուստով՝ ընդգծված ուշադրություն գրավող դիզայնով, խորը լանջաբացվածքով (դեկոլտեով), բաց մեջքով կամ որովայնի հատվածը չծածկող զգեստներով և բլուզներով, անհամաչափ կարճության այնպիսի զգեստներով կամ կիսաշրջազգեստներով, որոնց երկարությունը կանգնած դիրքում կամ քայլելիս ակնհայտորեն չի ծածկում ազդրերի ստորին հատվածը).

(կետը լրացվել է 24.07.2026թ. թիվ 14/37 որոշմամբ)

11) քննությանը ներկայանալ ոչ պատշաճ վիճակով, այդ թվում՝ ալկոհոլ օգտագործած վիճակով, արևային ակնոցներով.

(կետը լրացվել է 24.07.2026թ. թիվ 14/37 որոշմամբ)

12) կատարել Կարգով արգելված այլ գործողություններ:

(կետը լրացվել է 24.07.2026թ. թիվ 14/37 որոշմամբ)

75. Կարգի 74-րդ կետի պահանջը խախտած հավակնորդը Հանձնաժողովի նախագահի կամ անդամի կողմից ժամանակավոր հեռացվում է քննական սրահից: Նշված հավակնորդի խախտման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, ինչի հիման վրա Հանձնաժողովը քննարկում է քննությունից հավակնորդի հեռացման հարցը: Հեռացման վերաբերյալ Հանձնաժողովն ընդունում է որոշում, որի քաղվածքը ողջամիտ ժամկետում տրամադրվում է հավակնորդին: Այն դեպքում, երբ Հանձնաժողովը հաստատված չի համարում սույն կետի պահանջի խախտման փաստը, ապա հավակնորդը հնարավորություն է ստանում մասնակցել նույն օրվա քննությանը (լրացուցիչ ժամկետ տրամադրելով) կամ Հանձնաժողովը քննությունը կազմակերպում է այլ օր:

76. Եթե դիտորդի կամ Հանձնաժողովի անդամի մոտ հիմնավոր կասկած է առաջանում, որ հավակնորդն իր մոտ թաքցնում է Կարգի 74-րդ կետում նշված որևէ արգելված նյութ (առարկա), ապա դիտորդը կարող է հրավիրել Հանձնաժողովի որևէ անդամի (իսկ Հանձնաժողովի անդամը՝ նաև առանց դիտորդ հրավիրելու) և նրա ներկայությամբ հավակնորդից պահանջել ցույց տալու արգելված նյութը (առարկան): Եթե հավակնորդը հրաժարվում է ցույց տալ իր գրպանի կամ հագուստի այլ մասի (թաքստոցի) պարունակությունը կամ ցույց է տալիս Կարգի 74-րդ կետում նշված որևէ արգելված նյութ (առարկա), ապա հավակնորդը հեռացվում է որակավորման քննությունից և համարվում է, որ նա չի հանձնել որակավորման քննությունը: Սույն կետում նշված դեպքում Հանձնաժողովն ընդունում է արձանագրային որոշում, որի քաղվածքը ողջամիտ ժամկետում տրամադրվում է հավակնորդին:

77. Հավակնորդի ցանկությամբ գրպանի կամ հագուստի այլ մասի

(թաքստոցի) պարունակությունը կարող է ցույց տրվել նույն սեռի առնվազն երկու անձի (դիտորդի և (կամ) Հանձնաժողովի անդամի) ներկայությամբ՝ առանձին սենյակում:

78. Բացի Հանձնաժողովի անդամներից, դիտորդներից, Պալատի աշխատակազմից և քննություն հանձնող հավակնորդներից՝ այլ անձանց չի թույլատրվում ներկա գտնվել քննական սրահում, եթե այլ բան սահմանված չէ Կարգով:

79. Քննական սրահում զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել միայն Հանձնաժողովի թույլտվությամբ:

80. Որակավորման քննությունների ժամանակ ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց արգելվում է ցանկացած ձևով օգնել հավակնորդներին կամ միջամտել քննության ընթացքին: Դիտորդը չի կարող առանց Հանձնաժողովի անդամի ներկայության հաղորդակցվել հավակնորդի հետ:

81. Հանձնաժողովի կողմից քննությունների ամփոփումն (գնահատումը) իրականացվում է դռնփակ, որին կարող են ներկա գտնվել միայն Հանձնաժողովի անդամները և քարտուղարը:

VI. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ

82. Որակավորման քննությունների առաջին փուլի անցկացման օրը և ժամին հավակնորդը պետք է ներկայանա սահմանված վայր՝ քննական սրահ:

83. Հանձնաժողովի անդամը կամ աշխատակազմը գրանցում է հավակնորդին միայն իր անձը հաստատող փաստաթղթի (անձնագրի, զինվորական գրքույկի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի) առկայության դեպքում:

84. Որակավորման քննությունների առաջին փուլի ժամանակ հավակնորդին չի թույլատրվում նաև՝

1) լսարանից դուրս գալիս սուրճ կամ սնունդ օգտագործելը.

2) քննության ընթացքում այլ տարածք կամ աստիճանավանդակներ մուտք գործելը կամ քննասենյակ ներս մտնելուց հրաժարվելը.

3) գրավոր քննության դեպքում քննասենյակում կամ անմիջապես հարակից տարածքներում մնալը, եթե ավարտել է քննությունը:

85. Հավակնորդները որակավորման քննությունների առաջին փուլում՝ իրենց աշխատասեղաններն ընտրում են վիճակահանության միջոցով: Հանձնաժողովի նախագահը այնպես է կազմակերպում որակավորման քննությունների առաջին փուլի անցկացումը, որ հնարավորինս բացառվի Հանձնաժողովի անդամների կողմից հավակնորդներից յուրաքանչյուրի անձի և աշխատանքի նույնականացումը:

86. Հանձնաժողովի նախագահը կամ անդամը հավակնորդներին համառոտ պարզաբանում է քննական գործընթացը, այդ թվում ներկայացնում է ժամանակի սահմանափակման, ինչպես նաև որակավորման քննությունը

պատշաճ ձևով հանձնելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

87. Հավակնորդը գրավոր առաջադրանքը կատարում է համակարգչով՝ **Microsoft Office Word** ծրագրի միջոցով:

88. Արգելվում է գրավոր աշխատանքի մեջ կամ ֆայլի (նիշքի) վրա գրել՝

1) հավակնորդի անունը և (կամ) ազգանունը և (կամ) հայրանունը,

2) գրավոր առաջադրանքի հետ չկապված տառեր, թվեր և (կամ) պայմանանշաններ (այդ թվում՝ այլ անձանց անուններ, հեռախոսահամարներ), որը կարող է անհատականացնել գրավոր աշխատանքը:

89. Կարգի 88-րդ կետի պահանջը խախտած հավակնորդի գրավոր աշխատանքը գնահատվում է զրո միավոր (հավակնորդը համարվում է քննությունը չհանձնած):

90. Կազմակերպչական գործողություններն իրականացնելուց հետո Հանձնաժողովի նախագահը կամ անդամը հայտարարում է որակավորման քննությունների առաջին փուլը սկսված: Որակավորման քննության ժամանակը սկսվում է հաշվարկվել այդ պահից:

91. Ժամանակն ավարտվելուց հետո հավակնորդը պարտավոր է անմիջապես հանձնել աշխատանքը, այլապես կհամարվի քննությունը չհանձնած: Հավակնորդը կարող է սահմանված ժամից շուտ հանձնել աշխատանքը:

92. Հանձնաժողովի նախագահի կամ անդամի թույլտվությամբ հավակնորդը ժամանակավոր կարող է դուրս գալ քննական սրահից բացառապես Հանձնաժողովի անդամներից, դիտորդներից կամ աշխատակազմի ներկայացուցիչներից մեկի ուղեկցությամբ: Միաժամանակ մեկից ավելի հավակնորդի չի թույլատրվում դուրս գալ քննական սրահից՝ բացառությամբ արտակարգ բնույթ կրող դեպքերի:

93. Որակավորման քննությունների առաջին փուլի առաջին բաղադրիչի՝ քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածության հավակնորդների համար հարցաթերթիկը պարունակում է խնդիրներ կամ թեստային առաջադրանքներ, որոնք առնչվում են՝

1) քաղաքացիական դատավարությանը.
2) գործարքների անվավերությանը և դրա հետևանքներին.
3) աշխատանքային վեճերին.
4) սեփականության իրավունքի պաշտպանության վեճերին.
5) վարչական դատավարությանը:

(կետը լրացվել է 28.02.2023թ. թիվ 5/27-Լ որոշմամբ)

94. Որակավորման քննությունների առաջին փուլի առաջին բաղադրիչի՝ քրեաիրավական ուղղվածության հավակնորդների համար հարցաթերթիկը պարունակում է խնդիրներ կամ թեստային առաջադրանքներ, որոնք առնչվում են՝

1) հարցաքննության ձևերին և առանձնահատկություններին.
2) խափանման միջոցների հետ կապված հարցերին.
3) մինչդատական ակտերի իրավաչափության դատական

բողոքարկմանը.

4) քրեական վարույթում ապացույցներին և ապացուցման գործընթացին.

5) քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքներին:

(կետը լրացվել է 28.02.2023թ. թիվ 5/27-Լ որոշմամբ)

95. Հանձնաժողովն իրավունք ունի սույն կարգով առաջին փուլի առաջին բաղադրիչի համար սահմանված հարցաթերթիկի հարցերի (խնդիրների) համամասնությունը կամ ոլորտը փոփոխել:

96. Հանձնաժողովի նախագահը ապահովում է, որպեսզի տպագրվեն շտրիխ կոդով քողարկված բազմաթիվ ծածկագրեր պարունակող ինքնակպչուն թերթիկներ (**այսուհետ՝ թերթիկ**): Յուրաքանչյուր թերթիկ պետք է պարունակի չորս նույն շտրիխ կոդը պարունակող ծածկագիր, ինչպես նաև անվան, ազգանվան և ստորագրություն լրացնելու հատված: Թերթիկները պետք է քննությանը մասնակցող հավակնորդների քանակից առնվազն 5 տոկոս ավել քանակով:

97. Հավակնորդն աշխատանքն ավարտելուց հետո տպիչի միջոցով տպում է այն երկու օրինակից, որոնցից մեկ օրինակի վրա գրում է իր անուն, ազգանունը և բոլոր էջերը ստորագրում: Աշխատանքը տպելուց հետո Հավակնորդը պատահականության սկզբունքով ընտրում է շտրիխ կոդ պարունակող թերթիկը, որի վրա լրացնում է իր անունը, ազգանունը և այն ստորագրում: Հանձնաժողովի անդամը կամ Աշխատակազմը Հավակնորդի աշխատանքի երկու օրինակների վրա փակցնում է թերթիկի՝ երկուական ծածկագիր: Նույնականացման համար հիմք ընդունվող աշխատանքի (առաջադրանքի) վրա (որի բոլոր էջերը ստորագրել է հավակնորդը) պետք է փակցվի նաև անունը, ազգանունը և ստորագրությունը պարունակող թերթիկի հատվածը: Հավակնորդն իր կողմից չստորագրված օրինակը (աշխատանքը) տեղադրում է Հանձնաժողովի անդամի մոտ գտնվող անթափանց արկղում (**այսուհետ՝ Անթափանց արկղ**), իսկ ստորագրված երկրորդ (նույնականացման համար հիմք համարվող) օրինակը՝ ծալելուց հետո տեղադրում է թափանցիկ և կնքված արկղի (**այսուհետ՝ Կնքված արկղ**) մեջ: Կնքված արկղի բացվող հատվածը ստորագրվում է Հանձնաժողովի նախագահի, անդամի և ցանկացող դիտորդների կամ հավակնորդների կողմից: Կնքված արկղը կարող է բացվել Հանձնաժողովի կողմից որակավորման քննությունների առաջին փուլի արդյունքները հրապարակելուց հետո՝ նախապես հայտարարված վայրում և ժամանակ:

98. Որակավորման քննությունների առաջին փուլի ավարտից հետո, պատճենահանվում է ստուգման ենթակա աշխատանքները, որոնց վրա ըստ շտրիխ կոդերի նշվում են ծածկագրերը: Ծածկագրերը նշելուց հետո, աշխատանքները հանձնվում են առարկայական գնահատման հանձնախմբի անդամներին ստուգման համար: Հանձնախմբի անդամներից գնահատված աշխատանքները ստանալուց հետո, ամփոփելով գրավոր աշխատանքների գնահատականները՝ Հանձնաժողովը ընդունում է որոշում, որոշման մեջ նշելով ծածկագիրը և դրան համապատասխանող գնահատականը: Որակավորման

քննությունների առաջին փուլի վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը հայտարարվում է արդյունքներն ամփոփելուց հետո մեկ օրյա ժամկետում՝ փակցնելով այն Պալատի հայտարարությունների տախտակին, ինչպես նաև տեղադրելով Պալատի կայքէջում:

99. Կնքված արկղը բացելու մասին հայտարարության մեջ նշված օրը և ժամին, ներկաների մասնակցությամբ Հանձնաժողովի նախագահը բացում է Կնքված արկղը, որից անմիջապես հետո Հավակնորդների ներկայությամբ կատարվում է աշխատանքների և հեղինակների նույնականացում:

100. Հանձնաժողովի նախագահը աշխատանքների հեղինակներին նույնականացնելուց հետո հրապարակում է որակավորման քննությունների մասնակիցների տեղեկագիրը, որում նշվում է յուրաքանչյուր մասնակցի կողմից առաջին փուլի որակավորման քննությունը հանձնած կամ հանձնած չլինելու մասին տեղեկություն:

101. Որակավորման քննությունների առաջին փուլը չհանձնած հավակնորդին իր դիմումի հիման վրա ողջամիտ ժամկետում տրամադրվում է գնահատականի պատճառաբանությունը և/կամ գրավոր աշխատանքի պատճենը:

VII. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

102. Առաջին փուլի քննական աշխատանքները ստուգելու համար Հանձնաժողովը՝ Հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացված անձանցից (թեկնածուներից) ձևավորում է առարկայական գնահատման հանձնախումբ:

103. Հանձնաժողովը ներկայացված թեկնածուին կարող է չհաստատել որպես առարկայական գնահատման հանձնախմբի անդամ, որի վերաբերյալ կայացնում է պատճառաբանված որոշում: Սույն կետում նշված դեպքում Հանձնաժողովի նախագահը ներկայացնում է առարկայական գնահատման հանձնախմբի այլ անդամի թեկնածու:

104. Առարկայական գնահատման հանձնախումբը ձևավորվում է իրավունքի տվյալ բնագավառի մասնագետներից:

105. Առարկայական գնահատման հանձնախմբի անդամները լինում են ըստ մասնագիտական ուղղվածության՝ (1) քրեաիրավական կամ (2) քաղաքացիաիրավական և վարչաիրավական **(այսուհետ՝ քաղաքացիաիրավական)**: Ընդ որում՝ յուրաքանչյուր մասնագիտական ուղղվածության համար կարող է ներգրավվել Առարկայական գնահատման հանձնախմբի առնվազն երկու անդամ:

106. Քննության ավարտից հետո գրավոր աշխատանքներն ստուգելու նպատակով Հանձնաժողովի նախագահը կամ քարտուղարը Անթափանց արկղերում առկա աշխատանքները հանձնում է Առարկայական գնահատման հանձնախմբի անդամներին՝ ըստ մասնագիտական ուղղվածության, ինչպես նաև սահմանում է աշխատանքների գնահատման առավելագույն ժամկետը:

(կետը լրացվել է 24.07.2026թ. թիվ 14/37 որոշմամբ)

107. Առարկայական գնահատման հանձնախմբի անդամները

սահմանված ժամկետում ստուգում են գրավոր աշխատանքները, այնուհետև գնահատում և պատճառաբանում դրված գնահատականը: Գնահատումը կատարվում է Հանձնաժողովի կողմից սահմանված ձևի գնահատման թերթիկի վրա:

108. Յուրաքանչյուր հավակնորդի գրավոր աշխատանքը պետք է ստուգվի Առարկայական գնահատման հանձնախմբի առնվազն երկու անդամի կողմից:

109. Գրավոր աշխատանքներն Առարկայական գնահատման հանձնաժողովի անդամների կողմից ստուգվում և գնահատվում են Հանձնաժողովի կողմից սահմանած չափանիշների հիման վրա: Նշված չափանիշները Հանձնաժողովը պետք է սահմանի որակավորման քննություններից առնվազն 7 (յոթ) օր առաջ և Պալատի կայքէջում հրապարակի:

110. Առարկայական գնահատման հանձնախմբի անդամների կողմից գրավոր աշխատանքներն ստուգելուց հետո Հանձնաժողովի նախագահը հրավիրում է Հանձնաժողովի նիստ, որի ժամանակ հայտարարում է յուրաքանչյուր գրավոր աշխատանքի գնահատականը՝ ըստ առարկայական գնահատման հանձնախմբի անդամների գնահատման թերթիկների: Եթե նույն աշխատանքի վերաբերյալ գնահատման թերթիկներում նշված շեղումը էական չէ (կազմում է մինչև 20 (քսան) տոկոս), ապա Հանձնաժողովը կարող է հիմք ընդունել հավակնորդի օգտին տրված գնահատականը:

111. Հանձնաժողովի անդամը կարող է չհամաձայնել առարկայական գնահատման հանձնախմբի անդամի կողմից նշանակված գնահատականին: Հանձնաժողովի անդամի առարկության դեպքում հարցը դրվում է քվեարկության, որի արդյունքում Հանձնաժողովը կամ հաստատում է առարկայական գնահատման հանձնախմբի անդամների գնահատականը կամ ինքն է ստուգում և գնահատում հավակնորդի գրավոր առաջադրանքը:

112. Առարկայական գնահատման հանձնախումբն իր գործառույթներն իրականացնում է Կարգին համապատասխան: Հանձնախմբի անդամների մասին տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

113. Առարկայական գնահատման հանձնախմբի անդամի վարձատրությունը կատարվում է՝

1) Պալատի բյուջեի միջոցների հաշվին, բացառությամբ սույն կետի 2-րդ ենթակետում նշված դեպքի. Վարձատրության չափը և կարգը սահմանում է Պալատի նախագահը՝ Հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ.

2) Շրջանավարտների որակավորման քննությունների մասնակցության ժամանակ վերջիններիս աշխատանքները ստուգելու դեպքում՝ ՀՀ փաստաբանական ակադեմիայի միջոցների հաշվին՝ սույն կետի առաջին ենթակետում նշված չափով:

VIII. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ

114. Որակավորման քննությունների երկրորդ փուլն անցկացվում է Ժամանակացույցում նշված վայրում և օրը (օրերին): Միայն առաջին փուլը

հաղթահարած հավակնորդներն են իրավունք ձեռք բերում մասնակցել հարցազրույցին փուլին: Հանձնաժողովի քարտուղարը կամ Պալատի աշխատակազմը հավակնորդին ծանուցում է որակավորման քննությունների երկրորդ փուլի անցկացման օրվա և հրավիրման ժամի մասին: Հավակնորդը ծանուցման մեջ նշված օրը և ժամին պետք է ներկայանա սահմանված վայր և գրանցվի: Հավակնորդին մինչ քննության սկիզբը նախապես տրամադրվում է ծածկագիր, որն օգտագործվելու է միայն երկրորդ փուլի արդյունքները հրապարակվելու ժամանակ:

115. Պալատի աշխատակազմը գրանցում է հավակնորդին միայն իր անձը հաստատող փաստաթղթի (անձնագրի, զինվորական գրքույկի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի) առկայության դեպքում:

116. Գրանցվելուց հետո, հավակնորդը մուտք է գործում քննական սրահ ըստ հերթականության՝ Հանձնաժողովի քարտուղարի կամ Պալատի աշխատակազմի հրավերով:

117. Քննական սրահ մտնելով հավակնորդն ընտրում է իր քննական տոմսը, ստորագրում է տեղեկագրում և մուտք է գործում նախապատրաստման սենյակ: Ընտրված քննական տոմսը չի թույլատրվում փոխել:

118. Նախապատրաստման սենյակ մուտք գործած հավակնորդին որևէ պատրվակով չի թույլատրվում դուրս գալ քննական սրահից նախքան քննություն հանձնելը, բացառությամբ արտակարգ դեպքերի:

119. Նախապատրաստման սենյակում հավակնորդին տրամադրվում է թուղթ և գրիչ, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից որոշված այլ պարագա:

120. Նախապատրաստվելուց հետո, հավակնորդը Հանձնաժողովի կանչով ներկայանում է քննասենյակ, որտեղ՝

1) Առաջին բաղադրիչի մասով ստուգվում է հավակնորդի՝

ա) մասնագիտական աշխատանքի փորձառությունը, այդ թվում՝ իրավաբանական բնույթի փաստաթղթեր կազմելու կարողությունը, ենթադրյալ վստահորդի հետ հարաբերվելու ունակությունը, փաստաբանական ծառայությունը կազմակերպելու և իրականացնելու կարողությունը, բանավոր համոզիչ խոսքը,

բ) անձնական հատկանիշները, որոնք կարող են վերաբերել պատասխանատվության զգացմանը, ինքնատիրապետմանը, խոսքի մշակույթին, կարճ ժամանակահատվածում հանպատրաստից կողմնորոշվելու և վերլուծական կարողությունները,

գ) համակարգչային հմտությունները,

դ) էլեկտրոնային ռեսուրսներից օգտվելու հմտությունը՝ համակարգչով փաստաբանական գործունեության իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական աղբյուրներից և/կամ հարթակներից արագ փնտրելու կարողությունը,

ե) Փաստաբանի կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի («Փաստաբանության մասին» օրենք, Պալատի կանոնադրություն, Փաստաբանի վարքագծի կանոնագիրք և այլ վերաբերելի իրավական ակտեր) պահանջներին տեղեկացվածությունը.

2) Երկրորդ բաղադրիչի մասով հավակնորդը ներկայացվում է Փաստաբանի վարքագծի կանոնների վերաբերյալ քննական տոմսում նկարագրված խնդրի վերաբերյալ լուծումը՝ պատճառաբանելով այն և պատասխանելով Հանձնաժողովի անդամների հարցերին:

121. Հավակնորդի կողմից Հանձնաժողովի նախագահի կամ անդամի հանձնարարությունը՝ Կարգի 120-րդ կետում նշված ստուգման համար անհրաժեշտ գործողությունը կատարելուց հրաժարվելու դեպքում հավակնորդը համարվում է այդ բաղադրիչը չհանձնած: Հանձնաժողովը հարցազրույցի ժամանակ կարող է ներգրավել նաև մասնագետների:

1) ***(ենթակետը ուժը կորցրել է 24.07.2026թ. թիվ 14/37 որոշմամբ)***

122. Հանձնաժողովի անդամը որակավորման քննությունների բանավոր փուլի գնահատումը յուրաքանչյուր հավակնորդի և յուրաքանչյուր հարցի մասով իրականացնում է Հանձնաժողովի սահմանած չափանիշների համաձայն: Հանձնաժողովի ներկա անդամներից յուրաքանչյուրը գնահատման մասին նշումներ է կատարում իրեն տրամադրված քննաթերթիկում:

(կետը փոփոխվել է 24.07.2026թ. թիվ 14/37 որոշմամբ)

123. Որակավորման քննությունների երկրորդ փուլի գնահատականներն ամփոփվում են յուրաքանչյուր օրվա քննության ավարտից հետո, որի մասին Հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից կազմվում է համապատասխան գնահատման արձանագրություն: Երկրորդ փուլի գնահատականների ամփոփման համար հիմք է հանդիսանում Հանձնաժողովի ներկա անդամների նշանակած գնահատականների միջին գնահատականը:

Որակավորման քննությունների երկրորդ փուլին չմասնակցած հավակնորդը համարվում է որակավորման քննությունը չհանձնած, բացառությամբ այն դեպքի, երբ Հանձնաժողովի որոշմամբ հավակնորդը բացակայել է հարգելի (իր կամքից անկախ օբյեկտիվ խոչընդոտների) պատճառով: Բացակայությունը հարգելի ճանաչելու վերաբերյալ դիմումը պետք է ներկայացվի Հանձնաժողովին քննությունից առնվազն երկու օր առաջ մինչև քննությանը հաջորդող երրորդ աշխատանքային օրը (այն դեպքում, երբ առկա է եղել անհաղթահարելի ուժ նշված ժամկետում դիմումը ներկայացնելու համար, ապա՝ անհաղթահարելի ուժը դադարելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում): Հանձնաժողովի որոշմամբ հավակնորդի բացակայությունը հարգելի համարելու դեպքում, հավակնորդն իրավունք ունի մասնակցելու հերթական (հաջորդ) որակավորման քննությունների բանավոր փուլին:

(կետը լրացվել է 24.07.2026թ. թիվ 14/37 որոշմամբ)

124. Գնահատման արձանագրության մեջ հավակնորդների անունների փոխարեն նշվում են նրանց ծածկագրերը: Գնահատման արձանագրությունը հրապարակվում է Պալատի կայքում՝ երկրորդ փուլի քննության արդյունքներն ամփոփելուց հետո մեկ օրվա ընթացքում:

125. Որակավորման քննությունների բանավոր փուլին մասնակցած Հանձնաժողովի անդամներին՝ այդ թվում Հանձնաժողովի քարտուղարին՝ Հանձնաժողովի անդամի նույն չափով տրամադրվում է փոխհատուցում՝ Պալատի խորհրդի սահմանված կարգով և չափերով, որը կատարվում է՝

1) Պալատի բյուջեի միջոցների հաշվին, բացառությամբ սույն կետի 2-րդ ենթակետում նշված դեպքի.

2) Շրջանավարտների կողմից որակավորման քննությունների մասնակցության ժամանակ՝ ՀՀ փաստաբանական ակադեմիայի միջոցների հաշվին:

(կետը լրացվել է 03.10.2025թ. թիվ 21/26 որոշմամբ)

IX. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

126. Որակավորման քննությունների առաջին և երկրորդ փուլերի արդյունքները հրապարակելուց հետո, Հանձնաժողովը կայացնում է որակավորման քննություններն ամփոփելու մասին որոշում, որով ամփոփում է որակավորման քննությունների ընդհանուր արդյունքները և՝

1) Հավակնորդին համարում է որակավորման քննությունները հանձնած և տալիս է վկայագիր, եթե հավակնորդը հանձնել է որակավորման քննությունների առաջին և երկրորդ փուլերը, կամ

2) Հավակնորդին համարում է որակավորման քննությունները չհանձնած, եթե հավակնորդը չի հանձնել որակավորման քննությունների առաջին և/կամ երկրորդ փուլը:

127. Որակավորման քննությունները հանձնած հավակնորդների վերաբերյալ Հանձնաժողովը կայացնում է մեկ միասնական որոշում: Որակավորման քննությունները չհանձնած յուրաքանչյուր հավակնորդի վերաբերյալ կայացվում է առանձին որոշում, որն ուղարկվում է հավակնորդին ողջամիտ ժամկետում:

(կետը լրացվել է 24.07.2026թ. թիվ 14/37 որոշմամբ)

128. Որակավորման քննությունները հանձնած հավակնորդին Հանձնաժողովի նախագահը հանձնում է որակավորման վկայագիր:

X. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

129. Որակավորման քննության արդյունքները կարող են բողոքարկվել փաստաբանների պալատի խորհուրդ որակավորման քննության արդյունքների հրապարակումից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, իսկ փաստաբանների պալատի խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով փաստաբանների պալատի խորհրդի որոշումն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն կետում նշված ժամկետը հաշվարկվում է Կարգի 127-րդ կետում նշված որոշումը Հավակնորդի կողմից ստանալու հաջորդ օրվանից: Որակավորման քննության արդյունքները կարող են բողոքարկվել բացառապես ընթացակարգային խախտումների հիմքով:

(կետը փոփոխվել է 24.07.2026թ. թիվ 14/37 որոշմամբ)

130. Հավակնորդը Խորհրդին հասցեագրված բողոքի մեջ նշում է՝

1) իր անունը, ազգանունը, բնակության հասցեն, էլեկտրոնային հասցեն և

հեռախոսահամարը, քննության բողոքարկվող փուլը և մասնագիտական ուղղվածությունը,

2) բողոքի հիմնավորումները,

3) բողոքին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը և էջերի քանակը, դրանց առկայության դեպքում,

4) այն ընթացակարգային խախտումները, որոնք իր կարծիքով առկա են եղել:

(ենթակետը լրացվել է 24.07.2026թ. թիվ 14/37 որոշմամբ)

131. Պալատի աշխատակազմի ղեկավարը բողոքը և կից փաստաթղթերը հանձնում է Պալատի խորհրդին:

132. Կարգի 130-րդ կետում նշված գրավոր բողոքի բովանդակությանն առաջադրվող պահանջը պահպանված չլինելու դեպքում Խորհրդի նախագահն առանց նիստ գումարելու կարող է իր որոշմամբ բողոքը վերադարձնել հավակնորդին՝ պարտադիր նշելով, թե հավակնորդը Կարգի ո՞ր պահանջը չի կատարել: Հավակնորդը կարող է Խորհրդի նախագահի որոշումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում շտկել թերությունները և կրկին դիմել Խորհրդին:

133. Բողոքի վերաբերյալ Հանձնաժողովի նախագահը կամ անդամը Խորհրդին ներկայացնում է գրավոր դիրքորոշում՝ մինչև Խորհրդի նիստի օրը: Հանձնաժողովի նախագահը կամ անդամը կարող է մասնակցել Խորհրդի նիստին:

(կետը լրացվել է 24.07.2026թ. թիվ 14/37 որոշմամբ)

134. Խորհրդի այն անդամը, որը բողոք ներկայացրած հավակնորդի հետ գտնվում է կախյալ հարաբերության մեջ, կամ առկա է Խորհրդի տվյալ անդամի անաչառությունը և անկողմնակալությունը կասկածի տակ դնող որևէ հանգամանք իրավունք չունի մասնակցելու տվյալ հավակնորդին վերաբերվող հարցի քվեարկությանը:

135. Խորհուրդը հավակնորդի բողոքը քննարկում և դրա վերաբերյալ որոշում է կայացնում բողոքի ստացման պահից մեկամսյա ժամկետում:

136. Նիստի տեղի և ժամանակի մասին նիստից առնվազն 2 (երկու) օրացուցային օր առաջ բողոք ներկայացրած անձը ծանուցվում է իր բողոքում նշված էլեկտրոնային փոստի միջոցով: Խորհուրդը կարող է ծանուցել նաև այլ եղանակներով: Ժամանակին ծանուցված բողոք բերած անձի՝ Խորհրդի նիստին չներկայանալը չի խոչընդոտում բողոքի քննարկմանը:

137. Խորհրդի նիստին ներկա հավակնորդը ներկայացնում է իր բողոքը: Խորհրդի անդամները հարցեր կարող են ուղղել բողոքի քննարկմանը ներկա գտնվող հավակնորդին: Եթե հավակնորդը մասնակցում է ներկայացուցչի հետ, ապա Խորհրդի անդամի պահանջով, հարցին պետք է պատասխանի հավակնորդը: Հավակնորդի ներկայացուցիչը բոլոր դեպքերում կարող է ներկայացնել պարզաբանումներ հարցի կամ հավակնորդի պատասխանի վերաբերյալ: Հավակնորդի բացակայության դեպքում, Խորհրդի նախագահը համառոտ ներկայացնում է բողոքի պահանջը և հիմնական փաստարկները:

138. Հավակնորդի փաստարկներից հետո, նիստին ներկա

Հանձնաժողովի նախագահը կամ անդամը ներկայացնում է Հանձնաժողովի գրավոր դիրքորոշումը, որի վերաբերյալ Խորհրդի անդամները կարող են հարցեր ուղել:

139. Քննելով բողոքը՝ Խորհուրդը կարող է ընդունել որոշում՝

1) բողոքը մերժելու մասին, կամ

2) բողոքն ամբողջովին կամ մասնակի բավարարելու մասին:

140. Բողոքն ամբողջովին կամ մասնակի բավարարելու մասին որոշում կայացնելու դեպքում Խորհուրդը կարող է, որպես հետևանքների վերացման ածանցյալ լուծում՝

1) հավակնորդին համարել որակավորման քննության տվյալ փուլը հանձնած, եթե ընթացակարգային խախտումը վերացնելու դեպքում, հավակնորդը կհամարվի անցողիկ միավորներ ստացած, կամ

2) թույլատրել հավակնորդին մասնակցել հերթական հաջորդ որակավորման քննությունների այն փուլին, որի արդյունքների վերաբերյալ ներկայացված բողոքը մասնակի բավարարվել է:

(կետը փոփոխվել է 24.07.2026թ. թիվ 14/37 որոշմամբ)

141. Այն դեպքում, երբ Խորհուրդը բավարարել է հավակնորդի բողոքն այն հիմքով, որ Հանձնաժողովն անհիմն հեռացրել է հավակնորդին քննասենյակից, Խորհուրդը կարող է հավակնորդին առանց լրացուցիչ փաստաթղթեր հանձնելու (բացառությամբ դատվածության բացակայության մասին տեղեկանքի) թույլատրել մասնակցել հերթական հաջորդ քննությանը՝

1) միայն երկրորդ փուլի մասով, եթե հավակնորդը հանձել է առաջին փուլը.

2) առաջին և երկրորդ փուլերին, եթե հավակնորդը չի հանձնել առաջին փուլը:

142. Խորհրդի նախագահի թույլտվությամբ բողոքարկման նիստերը կարող են տեսանկարահանվել (տեսագրվել):

143. Խորհրդի որոշման եզրափակիչ մասը հրապարակվում է Խորհրդի նախագահի կողմից այն կայացնելուց անմիջապես հետո: Խորհրդի որոշումը բողոք բերած հավակնորդին տրամադրվում է ողջամիտ ժամկետում:

XI. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

144. Սույն կարգն ուժի մեջ է մտնում «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի հոկտեմբերի 5-ի ՀՕ-366-Ն օրենքի 41-րդ հոդվածին համապատասխան Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի նոր կազմի ձևավորման պահից:

145. Սույն կարգի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է ճանաչվում ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի «Որակավորման քննությունների ընդունման և հանձնման կարգը հաստատելու մասին» 15.03.2019թ. թիվ 5/13-Լ որոշումը, այդ թվում՝ դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի բոլոր որոշումները:

146. Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրության,

ռազմական դրության, համաճարակի կամ այլ պատճառով անձանց տեղաշարժի կամ անմիջական շփումների սահմանափակումների դեպքերում, երբ հնարավոր չէ կազմակերպել որակավորման քննությունը սույն կարգին համապատասխան, որակավորման քննությունը կազմակերպվում և անցկացվում է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված կարգով: